ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ (ՊԱՀՆՈՐԴԱԿԱՆ) ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՊՎԾ-ՄԱԾՁԲ-26/04

ք. Երևան «___» _____ 2026թ.

Հայաստանի Հանրապետության պետական վերահսկողական ծառայությունը, ի դեմս գլխավոր քարտուղար **Անի Բաղդասարյանի**, որը գործում է Հայաստանի Հանրապետության պետական վերահսկողական ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և

«ԱԼՖԱ ՖՈՐՍ» ՊԱՀՆՈՐԴԱԿԱՆ ԵՎ ԹԻԿՆԱՊԱՀԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն **Արմեն Բաղդասարյանի**, որը գործում է «ԱԼՖԱ ՖՈՐՍ» ՊԱՀՆՈՐԴԱԿԱՆ ԵՎ ԹԻԿՆԱՊԱՀԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՍՊԸ կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին։

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **անվտանգության ապահովման (պահնորդական) ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների։

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով։

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը։ Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը։

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին։

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարան ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը։

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը։

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ։

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **10 աշխատանքային օրվա** ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **12000000 (տասներկու միլիոն)** ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են համավարակը, երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը,

իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Կատարողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կատարողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը:

7.11 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.12 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 3.1 և N 4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.13 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.14 Սույն պայմանագրի պայմանները կիրառվում են մինչև պայմանագիրն ուժի մեջ մտնելը կողմերի միջև փաստացի, այն է՝ 25.02.2026թ. ծագած հարաբերությունների նկատմամբ: Ընդ որում, մինչև պայմանագիր կնքվելը Կատարողի կողմից մատուցված ծառայության դիմաց վճարումն իրականցվում է այդ պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու դեպքում:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Հայաստանի Հանրապետության պետական վերահսկողական ծառայություն	**«ԱԼՖԱ ՖՈՐՍ» ՊԱՀՆՈՐԴԱԿԱՆ ԵՎ ԹԻԿՆԱՊԱՀԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՍՊԸ**
ք. Երևան, Մաշտոցի 47	ք. Երևան,Ն. Զարյան 22ա
Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառնական վարչություն	«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011021954	Հ/Հ՝ 1570063213170100
ՀՎՀՀ 00183253	ՀՎՀՀ՝ 00215203
	info@alphaforce.am
Գլխավոր քարտուղար՝	**Տնօրեն**
---------- **Ա. Բաղդասարյան**	
/ստորագրություն/	
Կ.Տ	

Ստորագրող
ՀԱԿՈԲ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ
3808710112

2026-03-05 15:35:33 GMT+04:00
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

2026-03-06 12:17:07 GMT+04:00
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

Հավելված N 1
« » 2026թ. կնքված
***թիվ ՊԿԾ-ՄԱԾՁԲ-26/04** ծածկագրով պայմանագրի*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության							
						մատուցման	
չ/հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ժամկետը
1	98111121/2	**<u>Անվտանգության և պահնորդական ծառայություններ՝ ՀՀ, ք. Երևան, Մաշտոցի 47 հասցեում գտնվող ՀՀ պետական վերահսկողական ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) վարչական շենքի և դրա հարակից տարածքի համար</u>** Անհրաժեշտ է իրականացնել Ծառայությանը (Պատվիրատուի) պատկանող 1,8 հա մակերեսով, ՀՀ, ք. Երևան, Մաշտոցի 47 հասցեի վարչական շենքի, դրա հարակից տարածքի և անցակետի մուտքի-ելքի շուրջօրյա (24 ժամ) պահնորդական ծառայություն՝ առանց հանգստյան, հիշատակի և տոնական օրերի: Պահնորդական ծառայությունը մատուցվում է Պահնորդների կողմից, ովքեր պետք է առաջնորդվեն «Մասնավոր պահնորդական գործունեության մասին» ՀՀ օրենքով, այլ օրենքներով, ոլորտը կարգավորող այլ իրավական ակտերով, ինչպես նաև Պատվիրատուի կողմից սահմանված ներքին կանոնակարգով: Պետք է ունենան ՀՀ օրենքով սահմանված կարգով պահնորդական գործունեություն իրականացնելու որակավորում (լիցենզիա), ապահովված լինեն ծառայությունն իրականացնելու համար անհրաժեշտ միջոցներով (կապի միջոցներ, լապտերներ և այլ անհրաժեշտ տեխնիկական միջոցներ): Քաղաք Երևան, Մաշտոցի 47 հասցեի վարչական շենքը, դրա հարակից տարածքը և անցակետի մուտքը-ելքը պահնորդական ծառայությունը մատուցող կազմակերպությունը (այսուհետ՝ Կատարող) պետք է իրականացնի առնվազն 2 պահնորդի պարտադիր ներկայությամբ: Պահնորդները պետք է լինեն մինչև 50 տարեկան:	դրամ	**12000000**	1	ք. Երևան, Մաշտոցի 47	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից սկսած մինչև 31.12.2026թ.-ի ժամը 24:00-ն:

		Անցակետն ունի ծառայողական մուտք՝ նախատեսված աշխատակիցների և այցելուների համար, ինչպես նաև անցակետին կից դարպասներով մուտք նախատեսված ավտոմեքենաների համար: **Հերթապահություն իրականացնելու ժամանակահատվածում Կատարողը կազմակերպում և ապահովում է՝** ➢ Պատվիրատուի վարչական շենքի, անցակետի մուտքի-ելքի, Ծառայության տարածքի, ինչպես նաև Պատվիրատուի կողմից Կատարողի պահպանությանը հանձնված ապրանքանյութական արժեքների պահպանությունը: ➢ Կատարողը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պատասխանատվություն կկրի այն վնասի համար, որը նրա կողմից անհրաժեշտ անվտանգության և պահպանության միջոցառումները ոչ պատշաճ իրականացնելու հետևանքով կհասցվի Պատվիրատուին, ինչպես նաև իրեն վստահված նյութական արժեքների վնասի համար: ➢ Արտակարգ իրավիճակների դեպքում (հրդեհ, ահաբեկչություն, Ծառայության բնականոն աշխատանքների խոչընդոտում, պահպանվող տարածքի անվտանգության ապահովման հետ կապված խնդիրներ և այլն) Կատարողն անմիջապես իրազեկում է Պատվիրատուի անվտանգությամբ զբաղվող ստորաբաժանմանը՝ Ծառայության ներքին անվտանգության և հսկողության բաժնի (այսուհետ՝ ՆԱՀԲ) աշխատակիցներին և ոստիկանությանը: Ահազանգ ստանալուց հետո Կատարողը ապահովում է իր համապատասխան արագ արձագանքման խմբի այցը նշված տարածք: Նշված պայմանները ապահովելու նպատակով Կատարողը օգտագործում է իր համապատասխան տեխնիկական միջոցները: ➢ Պահպանվող տարածքի անվտանգության ապահովման հետ կապված իրավասու անձանց հանձնարարությունների և հրահանգների կատարում: ➢ Պայմանագրի կատարման ընթացքում պահնորդի կողմից պահնորդական ծառայությունների ոչ պատշաճ կատարման կամ չկատարման դեպքում՝ Կատարողը պարտավոր է անհապաղ շտկել առկա խնդիրը, հակառակ դեպքում՝ Պատվիրատուի պահանջով 1 աշխատանքային օրվա ընթացքում փոխարինել ծառայություն իրականացնող պահնորդին այլ պահնորդով: ➢ Պահնորդական ծառայություններ մատուցելիս Պահնորդները պետք է կրեն եղանակային պայմաններին համապատասխան ամառային և ձմեռային միասնական համազգեստ և պետք է ունենան պահնորդի որակավորման ստուգման վկայական, որի կազմակերպումն ու ապահովումը իրականացվում է Կատարողի միջոցներով:					

		➢ Կատարողը Պահնորդին այլ Պահնորդով մշտապես կամ ժամանակավորապես փոխարինելիս պարտավոր է նախապես՝ 1 օր առաջ համաձայնեցնել Պատվիրատուի հետ: ➢ Պահնորդների հերթափոխման հանձնում-ընդունումը պետք է իրականացվի առանց Ծառայության բնականոն աշխատանքների խոչընդոտման: ➢ Կատարողը վերահսկում է իր ծառայությունների ամբողջ ընթացքը շուրջօրյա, հերթապահ ծառայության միջոցով, ապահովում է ահազանգի դեպքում արագ արձագանքման խմբի ուղեգրումը տագնապի վայր: ➢ Կատարողը գրանցամատյաններում կատարված գրառումների, այցելուների, անցագրերի/անցաթղթերի, ինչպես նաև առաջիկա շաբաթվա պահնորդների (7 օր առաջ) վերաբերյալ տեղեկատվությունը Պատվիրատուի կողմից սահմանված կարգով տրամադրում է Պատվիրատուի ՆԱՀԲ աշխատակիցներին: **Կատարողի հիմնական պարտականություններն են.** ➢ Տարածքի, գույքի և նյութական արժեքների պահպանումը՝ վնասներից, գողություններից, կորուստներից: ➢ Ծառայության տարածքում առկա տեսահսկման համակարգերի շուրջօրյա վերահսկողության իրականացումը: ➢ Այցելուների անցագրերի/անցաթղթերի դուրսգրումը և տրամադրումը: ➢ Այցելուների գրանցումը համապատասխան գրանցամատյանում: ➢ Պահպանվող տարածք մուտք գործելուց առաջ այցելուների անձը հաստատող փաստաթղթի պարտադիր ստուգումը: ➢ Ընդունող անձնակազմին տեղեկացումը և զեկուցումը այցելուների վերաբերյալ, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում հյուրերի և այցելուների ուղեկցումը: ➢ Շուրջօրյա ծառայության միջոցով կանխարգելել, կանխել և կասեցնել պահպանվող տարածքի իրավախախտումները, հնարավոր հակահիրավական ոտնձգությունները և այլ համանման երևույթները, ապահովել պահպանվող տարածքում գտնվող այցելուների պատշաճ վարքագիծը և հետևել հասարակական կարգի պահպանությանը: ➢ Լիազորված ավտոմեքենաների մուտքի/ելքի կազմակերպումը և համապատասխան գրանցամատյանում հաշվառման իրականացումը:					

		➢ Անմիջապես արձագանքել տագնապային, հրդեհային համակարգի ահազանգի ակտիվացման դեպքերում, ինչպես նաև իրականացնել տարածքում հակահրդեհային վերահսկման ուղղված գործողություններ: ➢ Ոչ լիազորված անձանց մուտքը արգելելը պահպանվող տարածք: ➢ Ոչ լիազորված ավտոմեքենաների մուտքի/ելքի կազմակերպումը և համապատասխան գրանցամատյանում հաշվառման իրականացումը: ➢ Պահպանվող տարածքում անընդմեջ շրջայցերի իրականացումը և դրա վերաբերյալ համապատասխան գրանցամատյաններում գրառումների իրականացումը: ➢ Հակահրդեհային կանոնների ապահովումը և պահպանումը: ➢ Պահպանվող տարածքում առկա բոլոր տեսակի ակնհայտ և կասկածելի գործողությունների և առարկաների վերաբերյալ անմիջապես զեկուցումը վերադասին և Պատվիրատուի ՆԱՀԲ աշխատակիցներին ➢ Այցելուների կողմից անվտանգության կանոնների խախտման դեպքում տարածքից հեռացումը: ➢ Հրդեհավտանգ տարածքների վերահսկումը և ստուգումը: ➢ Անմիջապես արձագանքել արտակարգ իրավիճակների դեպքում (հրդեհ, այլ արտակարգ իրավիճակ կամ կոմունալ վթարի դեպքում և այլն), այդ մասին անհապաղ տեղեկացնելով ՀՀ ՆԳՆ օպերատիվ կառավարման կենտրոն և Պատվիրատուի ՆԱՀԲ աշխատակիցներին: Մինչև փրկարար կամ համապատասխան ծառայության աշխատակիցների ժամանումը Կատարողը իրավիճակից ելնելով հնարավոր միջոցներ պետք է ձեռնարկի դեպքի պատճառները, վտանգավոր հետևանքների զարգացումը վերացնելու, անձանց անվտանգությունն ապահովելու և նյութական արժեքները պահպանելու ուղղությամբ: ➢ Արտակարգ իրավիճակներում տարահանման կազմակերպման օժանդակումը: ➢ Օրվա ընթացքում ոչ աշխատանքային ժամերին՝ առնվազն 3 անգամ շրջայցերի իրականացումը Ծառայության տարածքում և արտաքին պարագծով, ինչպես նախատեսված է Ծառայության հրահանգների ցանկում: Այս բոլոր պայմանները պարտադիր են, ներառված են պայմանագրի գնի մեջ և իրականացվում են Կատարողի կողմից: **Պարտադիր պահանջ՝**					

		*Ծառայություն մատուցող ընտրված մասնակիցը պետք է ունենա ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահնորդական գործունեություն իրականացնելու որակավորում (լիցենզիա): **Սույն տեխնիկական պայմանների դրույթներով չսահմանված լրացուցիչ առանձնահատկությունները իրականացնել ըստ Պատվիրատուի պահանջների և Պատվիրատուի հետ համաձայնեցմամբ:					

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ
Հայաստանի Հանրապետության պետական վերահսկողական ծառայություն
ք. Երևան, Մաշտոցի 47
Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
Հ/Հ 900011021954
ՀՎՀՀ 00183253

Գլխավոր քարտուղար՝

---------- **Ա. Բաղդասարյան**
/ստորագրություն/
Կ.Տ

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ
«ԱԼՖԱ ՖՈՐՍ» ՊԱՀՆՈՐԴԱԿԱՆ ԵՎ ԹԻԿՆԱՊԱՀԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՍՊԸ
ք. Երևան,Ն. Զարյան 22ա
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 1570063213170100
ՀՎՀՀ՝ 00215203
info@alphaforce.am
Հեռ.՝ +374 43 43 43 99

Տնօրեն՝

---------- **Ա. Բաղդասարյան**
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
« » 2026թ. կնքված
***թիվ ՊԿԾ-ՄԱԾՁԲ-26/04** ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության																
			դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**													
չ/հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	98111121/2	Անվտանգության ապահովման (պահնորդական) ծառայություններ			**1200000**	**2400000**	**3600000**	**4800000**	**6000000**	**7200000**	**8400000**	**9600000**	**10800000**	**12000000**	**12000000**

***Վճարումը կկատարվի փաստացի մատուցված ծառայությունների հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա:*

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ
Հայաստանի Հանրապետության պետական վերահսկողական ծառայություն
ք. Երևան, Մաշտոցի 47
Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
Հ/Հ 900011021954
ՀՎՀՀ 00183253

Գլխավոր քարտուղար՝

---------- **Ա. Բաղդասարյան**
/ստորագրություն/
Կ.Տ

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ
«ԱԼՖԱ ՖՈՐՍ» ՊԱՀՆՈՐԴԱԿԱՆ ԵՎ ԹԻԿՆԱՊԱՀԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՍՊԸ
ք. Երևան,Ն. Զարյան 22ա
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 1570063213170100
ՀՎՀՀ՝ 00215203
info@alphaforce.am
Հեռ.՝ +374 43 43 43 99

Տնօրեն՝

---------- **Ա. Բաղդասարյան**
/ստորագրություն/
Կ.Տ